նէութեան՝ լուսաւորէ զաշխարհն Աղուանից զլխովին, ի վերայ որոց կացուցանի Հայրապետ՝ եպիսկոպոս ոմն եկեալ ի Հռոմայ։ Զկնի մահուան յիշեալ հայրապետին և Ուռնայր արքայի՝ թուլանայ վերստին Քրիստոնէական կրօնն, ուստի ի խնդրոյ համախմբեալ ժողովրդոց կացուցանի կաթուղիկոս Աղուանից ի ժառանգաց սրբոյն Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի սուրբն Գրիգորիս որդի Վրթանէսի։ Բայց Սանատրուկ որպէս ապրստամբ ի թագաւորաց Հայոց, նոյնպէս և ի Քրիստոնէական կրօնից՝ սպանանէ զսուրբն Գրիգորիս։ և ջանայ չիջուցանել զլուսաւոր աստուածպաշտութիւն, սակայն աշակերտք սրբոյն Գրիգորիսի յամենայն դէպս ջանան և պահեն յանկիւնս և ի խորչս Կովկասու զհաւատան անբիծ. թէպէտ և ոմանք կատարին սքանչելի նահատակութեամբ։

Իսպառ ի խորս կռապաշտութեամբ թաղեալ լինէր Աղուան, եթէ Վաչէ և Վաչական խոր արմատ ոչ տպաւորէին ի սիրտս և ի հոգիս նոցա զուղղափառ վարդապետութիւն Քրիստոսի, և եթէ Վարազ Գրիգոր ոչ ընկալնոյր զնոյն հաւատ հանդերձ ամենայն իշխանօք։

Ի վերջոյ տկարացան Աղուանք մնալ ի ստորոտս Կովկասու, անդադար հարստահարեալք ի Խազարաց և ի Հոնաց, ուստի աճող կաթուղիկոսութեան փոխադրեցաւ ի Դարբանդայ ի Պարտաւ, և հրաշակերտ հոյակապ եկեղեցին փոխեցաւ ի մզկիթ, յաւուրց անտի Աբաբայոց ցայսօր ժամանակի։ Ախտս զի անյայտող բերմունք հետզհետէ հասին ի վերայ նոցա, որովք և կորուսին նորա զթագաւորս, զիշխանս, զկաթուղիկոսունս, զքաղաքս և զհայրենիս զլխովին, և հարկադրեցան լինել տարագիրք ի հայրենեացս։ Ոմանք սպաստանեալ յանմատչելի լերինս Կովկասու՝ կացին մնացին ի լայնատարած հովիտս նորա և ի ձորս. ուր միացան ընդ այլոց ազգաց անդէն բնակողաց, ուստի և կորուսին որպէս զազգութիւն, նոյնպէս և զհաւատս և զդիրս։ Այլք որպէս պատմէ կաթուղիկոսն Աղուանից Եսայի, գերեցան ի ձեռն Թամուրլանկի և վտարանդեալք ի հայրենեաց՝ ապաւինեցան ի լերինս Քասպուայ, որք թէպէտ անփոփոխ պահեցին զանուն ազգին և զբարբառ, բայց եղեն Մահմետականք